ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Ա.Կուրղիբեկյան

«01» 09 2022

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ք.Երևան,Ավան

Թիվ 104 հիմնական դպրոց, 3գ դասարան

ուսումնական հաստատության անվանումը, դասարան

Հովհաննիսյան Անի Վարդանի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

«2022- 2023» ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

3գ դասարանում սովորում են 22 աշակերտ՝ 16 տղա, 6 աղջիկ: Դասարանում տիրում է առողջ մթնոլորտ: Աշակերտները հարգում ու սիրում են միմյանց, պատրաստ են օգնել իրար ցանկացած հարցում, դպրոց են հաճախում մեծ ոգևորությամբ և հետաքրքրությամբ: Կայացնում են միասնական որոշումներ, հարգում են ընկերների իրավունքները:

2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հրավիրել ծնողական ժողովներ, կահավորել դասարանը, հետևել մաքրությանը, փորձել նորովի աշխատել,գտնել և կիրառել դասավանդման այնպիսի հնարներ, որոնց շնորհիվ դասավանդման պրոցեսը դառնա հետաքրքիր և արդյունավետ: Զարգացնել ստեղծագործական ունակությունները, հնարավորություն տալ գործնականում կիրառել ստացած գիտելիքները: Ծնողների հետ տանել այնպիսի աշխատանքներ, որ նրանք աջակից դառնան դասվարին թե՛ կազմակերպչական, թե՛ ուսումնադաստիարակչական հարցերում:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն – Ծանոթացնել հայ ժողովրդի պատմությանը, կարևոր իրադարձություններին, ընդլայնել աշակերտների մտահորիզոնը, պատմել հայ ազգի, նրա մշակույթի, եկեղեցու և կրոնի մասին:

3.2 Գեղագիտականն դաստիարակություն – Գաղափար գեղեցիկի, բարու մասին, զարգացնել երեխայի ճաշակը, ստեղծագործական ակտիվությունը, երևակայությունը: Զրույցներ վարել հայ մշակույթի, գեղանկարչության մասին, ծանոթացնել ազգային մշակույթի արժեքներին:

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն – Անցկացնել զրույց հայրենասիրական թեմաներով՝ <<Իմ հայրենիքը>>, <<Ես սիրում եմ իմ հայրենիքը>>: Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի հայրենիքը, նվիրվածություն հայրենի հողին: Խոսել ազգային հերոսների մասին:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն – Զրույցներ ֆիզկուլտուրայի դերի ու նշանակության մասին, դրա կարևորությունը առողջության պահպանման գործում: Զրուցել նաև սպորտում աչքի ընկած հայ մարզիկների մասին:

3.5 Աշխատանքային դաստիարակություն – Հետևել դպրոցի ու դասարանի մաքրությանը, փոքր տարիքից դաստիարակել սեր դեպի աշխատանքը: Հարգել ուրիշի աշխատանքը: Դասարանում ստեղծել գեղեցիկ անկյուն:

3.6 Բնապահպանական դաստիարակություն- Երեխաների մեջ դաստիարակել սեր և հոգատարություն բնության նկատմամբ: Յուրաքանչյուր երեխա պարտավոր է հետևել շրջակա միջավայրի մաքրությանը: Բնապահպանական խնդիրները վերաբերում են և՛ մեծերին, և՛ փոքրերին:

4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ – Մշտապես կապ ստեղծել ծնողների հետ, նրանց մասնակից դարձնել դպրոցում անցկացվող միջոցառումներին: Հրավիրել ծնողական ժողովներ: Զրուցել օրվա ռեժիմի ճիշտ կազմակերպման, ընտանիքի և դպրոցի կապի մասին:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուս/շ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
I	Աշակերտների իրավունքներն ու պարտականությունները	02.09.22թ	Դասղեկ
II	Զրույց՝ <<Եղի՛ր ազնիվ, արդար և կարգապահ>>	09.09.22թ	Դասղեկ
III	ՀՀ անկախության 31-րդ ամյակին նվիրված զրույց	16.09.22թ	Դասղեկ
IV	Զրույց՝ <<Իմ տունը Հայաստանն է>>	23.09.22թ	Դասղեկ
V	Զրույց՝ <<Աշուն թեմայով>>	30.09.22թ	Դասղեկ
VI	,,ՈՒսուցչի օր,, զրույց դպրոցի նշանակության, ուսուցչի ազգանվեր առաքելության մասին	07.10.22թ	Դասղեկ
VII	Զրույց՝ <<Իմ ընտանիքը>>	14.10.22թ	Դասղեկ
VIII	Շրջակա միջավայրի պահպանություն	21.10.22թ	Դասղեկ
IX	Դասարանական կանոնների կազմում, սենյակային ծաղիկների մշակում	04.11.22թ	Դասղեկ
X	Երեխաների կյանքի,զգացմունքների,առօրյա յի,շրջապատի վերաբերյալ ստեղծագործությունների ընթերցում	11.11.22թ	Դասղեկ
XI	Զրույց Ինչ է ընկերությունը և բարեկամությունը	18.11.22թ	Դասղեկ
XII	Զրույց՝ Ճանապարհային երթևեկության կանոններ	25.11.22թ	Դասղեկ
XIII	Ծանոթանալ ընկերների երազանքներին,ձգտումներին:	02.12.22թ	Դասղեկ
XIV	Զրույց՝ Կոնֆլիկտների լուծման եղանակներ	09.12.22թ	Դասղեկ
XV	Զրույց՝ Իմ տունը իմ հայրենիքն է	16.12.22թ	Դասղեկ
XVI	Զրույց Ամանորի պատմության,տոնակատարության,եղևնու՝որպես տոնածառ դառնալու պատմության մասին	23.12.22թ	Դասղեկ
XVII	Զրույց՝ <<Ազատ, անկախ Հայաստան>>	13.01.23թ	Դասղեկ
XVIII	Զրույց Հայոց գրերը, Մ Մաշտոցի կենսագրությունը,կատարած աշխատանքները	20.01.23թ	Դասղեկ
XIX	Զրույց ձմռանը սառնամանիքից պաշտպանվելու մասին	27.01.23թ	Դասղեկ
XX	«Ես » -ի մասին զրույցներ , ինքնաճանաչման,ինքնադրսեվորման Զարգացում	03.02.23թ	Դասղեկ
XXI	Զրույց մարդու կենսական օրգանների մասին: Դրանց պաշտպանումն ու Խնամքը	10.02.23թ	Դասղեկ
XXII	Հովհ.Թումանյանը ամենայն հայոց բանաստեղծ, մեծ մանկագիր, հեքիաթագիր: Գրիք նվիրելու օր: Մայրենի լեզվի միջազգայինօր	17.02.23թ	Դասղեկ
XXIII	Առողջության պահպանման կարևորությունը, ֆիզիկական կախվածություն, ճիշտ սնունդ	24.02.23թ	Դասղեկ
XXIV	Զրույց «Ինչ հոգևոր տոներ գիտեք» թեմայով	03.03.23թ	Դասղեկ
XXV	Շնորհավոր տոնդ, մայրիկ: Բացիկների պատրաստում՝ ընտանիքի անդամներին շնորհավորելու համար	10.03.23թ	Դասղեկ
XXVI	Բնության փոփոխությունների դիտարկում «Գարունն արթնացել է »	17.03.23թ	Դասղեկ
XXVII	Զրույց շրջապատում ճիշտ դրսևորվելու, հարգալից վերաբերմունք ունենալու,դիմացինի հետ հաղորդակցվելու մասին	24.03.23թ	Դասղեկ

XXVIII	Տարածքի մաքրությունը, բնության անաղարտությունը, բարիքների խնայողաբար օգտագործումը կարևորելու նպատակով անցկացնել զրույց << Երկրագունդը իմ տունն է>>թեմայով	07.04.23թ	Դասղեկ
XXIX	Հաղթանակի և խաղաղության տոն	14.04.23թ	Դասղեկ
XXX	,,Իմ տեղն ընտանիքում,, շարադրության միջոցով ամրապնդել ընտանիքը սիրելու զգացմունքը	21.04.23թ	Դասղեկ
XXXI	«Հայաստանը մեր հայրենիքն է » թեմայի մասին զրույցներ,	28.04.23թ	Դասղեկ
XXXII	Զրույց հեքիաթների, դրանց ստեղծման, բարի և չար հերոսների, նրանց արարքների մասին թեմայով	05.05.23թ	Դասղեկ
XXXIII	Ձեռք բերած գիտելիքների, որակների ամրապնդում,կատարած աշխատանքների քննարկում	12.05.23թ	Դասղեկ
XXXIV	Առջևում ամառ է, ամառվա ընթացքում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ հանձնարարականներ, առաջարկություններ	19.05.23թ	Դասղեկ

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

1-ին կիսամյակ		2-րդ կիսամյակ	
Շաբաթվա օրը	դասաժամը	Շաբաթվա օրը	դասաժամը
5-րդ	6-րդ	5-րդ	6-րդ